ՀԵՆՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ - 80

ԳՐԱԿԱՆ ԵՐԹԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ՈՒՂԵԿԻՑԸ



«Հենրիկը դասարանի սիրտն էր: Հիանալի կազմակերպիչ, «լիդեր»՝ այդ բառի ամենաբարի իմաստով: Ընկերներին որեւէ կերպ օգնելը, խորհուրդ տալը, իր հերթին՝ խորհուրդ հարցնելը նրա ապրելակերպն էր: Հենրիկին օտար էին վերապահ մոտեցումը կամ ցուցադրականությունը: Դասընկերները սիրում էին նրան՝ իր պարզ ու սրտաբաց խառնվածքի, իսկ ուսուցիչները՝ ուշիմ, հետաքրքրասեր ու պարտաճանաչ աշակերտ լինելու համար: Գրականության հանդեպ առանձնակի սերը նկատվեց արդեն դպրոցական տարիներից, առաջին բանաստեղծությունները նվիրված էին հայրենիքին եւ նույնչափ անկեղծ ու պոռթկուն էին...»:- Այսօր այսպես է հիշում իր սանին վիրահայ ճանաչված ու սիրված թբիլիսցի գրող-մանկավարժ Խաժակ Եփրիկյանը:

1980-2000 թվականների վիրահայ գրական երթի արժանավոր ուղեկիցը՝ բանաստեղծ, թարգմանիչ, Վրաստանի հայ գրողների միության քարտուղար Հենրիկ Սահակյանը, այս տարի կդառնար 80 տարեկան... Նրա կյանքը եւ ստեղծագործական ուղին ընդհատվեց 2002թ., երբ ընդամենը 65 տարեկան էր...

Ծնվել է Թբիլիսիում, 1937-ին: Ոսկե մեդալով ավարտել է Թբիլիսիի թիվ 94 հայկական միջնակարգ դպրոցը, Սվերդլովսկի՝ Ուրալյան Պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, Մոսկվայի օտար լեզուների պետդասընթացի իսպաներեն բաժինը: Ստեղծագործել է հայերեն, վրացերեն, ռուսերեն:

Առաջին բանաստեղծությունները լույս են տեսել մեր թերթի էջերում, որն այն տարիներին կոչվում էր «Սովետական Վրաստան»: Արդեն երիտասարդական օրերից թերթը դարձավ ոչ միայն Հենրիկ Սահակյանի ստեղծագործական ոգորումների արտահայտիչը, այլ նաեւ՝ ինչպես շատերի համար, ով զբաղվում էր գրականությամբ, ուղղորդը. նա հաճախակի այցելում էր թերթի «Մշակույթի ու գիտության» բաժնի վարիչ, անվանի արձակագիր Բենիկ Սեյրանյանին (1913-2003 թթ.), կիսվում եւ խորհուրդներ էր ստանում նրանից: Այդ ժամանակաշրջանի վիրահայ գրական հարթակը՝ Թբիլիսիում հրատարակվող «Կամուրջ», «Վերնատուն» տարեգրքերը, անհնար է պատկերացնել առանց Հենրիկ Սահակյան հեղինակի: Ժամանակակիցների վկայությամբ, բանաստեղծն այդ աշխարհի գրական երեկոների պարտադիր մասնակիցն էր եւ այդ միջավայրում մշտապես դրսեւորվել է իբրեւ մի զորեղ հայտնության, գրական ինչ-որ վիթխարի արարման ծարավի ստեղծագործող, իբրեւ ներքին, ազնվացնող դրամատիզմ ունեցող մտավորական:

Իր առաջին՝ «Հրկիզվող կաղնի» ժողովածուում (1982թ., Թբիլիսի, «Մերանի»), բանաստեղծը մտորում է հայրենասիրության, սիրո, մարդկային բարության, պատերազմի պատճառով մանկությունից զրկված մանուկների մասին: Այդ մտորումների ենթատեքստում համարձակորեն առաջադրում է՝ «Ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ գալիս եւ ո՞ւր եմ գնում» խնդրահարույց հարցերը, որոնք յուրատիպ պատասխաններ պիտի գտնեին նաեւ ընթերցողի ներաշխարհում:

«Հրկիզվող կաղնի» ժողովածուին հաջորդեցին հեղինակի լռության տարիները. լռեց, որովհետեւ ապրում էր հոգու ճգնաժամ, որ ծնվել էր հուսախաբությունից: Ստեղծագործ հոգին, սակայն, երկար չի կարող լռել, բանաստեղծն ասելիք ուներ եւ ասաց: 90-ականներին, մերօրյա տագնապների, ցավերի եւ հույսերի անդրադարձը եղավ նրա «Արթնացում» ժողովածուն, ապա ընթերցողի սեղանին դրվեց հայ դասական բանաստեղծ Հովհաննես Շիրազին նվիրված «Հարություն» (1997թ.) պոեմը: Այս ժանրի գործերում Սահակյանը հաճախ դիմել է պատմական թեմաների:

Մեր թվարկության առաջին դարի հռոմեական կայսր Ներոնին է նվիրված «Ներոն» (2001թ.) պոեմը, որտեղ կայսեր պատմական կերպարը վեր է հանված իբրեւ ցասկոտ բողոք ընդդեմ բիրտ ուժի ու կամայականության: Նրա ստեղծագործական աշխարհում տեղ է գտել նաեւ չափածո դրամա, ինչի հետաքրքիր օրինակ է «Հիսուսի աշակերտը» (2000թ.), ուր վեր է հանված Գրիգոր Լուսավորչի պատմական կերպարը:

2001-ին լույս տեսած «Աղավնիները թռչում են հյուսիս» բանաստեղծական գիրքը ամբողջովին ներծծված է սիրո զգացումով: Սերն ապրելու տենչի հանգրվանն է, ահա նրա քառատողերից մեկը.

«Կպատահի՞ երբեւէ, որ ինձ հանկարծ հիշես, /Որ կարոտով քո սրտի՝ նայես դեպի հարավ, /Հիշես այն թուխ պատանուն, որ քեզ գրկեց մի օր, /Եվ ոսկին քո վարսերի իր շուրթերին առավ...»:

Գրքում առկա է հազվադեպ մի իրողություն, բանաստեղծությունները մատուցվել են հայերեն ու ռուսերեն, եւ թարգմանությունը կատարել է ինքը հեղինակը՝ այդ կերպ ապավինելով բնագրին, այսինքն՝ ինքն իրեն:

Ընդգծենք նաեւ, որ Հենրիկ Սահակյանն առանձնակի ավանդ ունի թարգմանական ասպարեզում: Նա իսպաներենից թարգմանել է Գ.Մարկեսի, Խ.Կորտասարի, Գ.Լորկայի եւ Պուիգի պատմվածքներն ու վիպակները: Վրացերենից՝ Տարիել Ճանտուրիայի «Բարձը՝ ատոմազերծ գոտի» ժողովածուն, Աննա Կալանդաձեի, Մուրման Լեբանիձեի, Մուխրան Մաճավարիանու, Ջանսուղ Չարկվիանու ստեղծագործությունները: Գործեր, որոնք ցուցանում են բանաստեղծի ու թարգմանչի ստեղծագործական բեղուն ընթացքը: Նրա ամենամեծ գործը, սակայն, մնաց անավարտ. դա վրաց դասականների անթոլոգիայի հայերեն թարգմանությունն էր: Ըստ գրչակից ընկերների վկայության, Սահակյանը վրաց ժամանակակից բանաստեղծների գրքերի սեփական թարգմանական գրադարան ստեղծելու մտադրություն է ունեցել: Ավա՜ղ, այդ մտադրությունն սկսել, բայց անավարտ է թողել...

Գրական բեղմնավոր գործունեության համար՝ Հենրիկ Սահակյանը պարգեւատրվեց կառավարական բարձրագույն «Պատվո շքանշանով»: Իրենց գնահատականներում ոմանք հիացան, ոմանք քննադատեցին Հենրիկ Սահակյան բանաստեղծի ինքնատիպ ստեղծագործությունները, բայց լռության չմատնեցին:

«Եթե իմ ստեղծագործություններով ինձ հաջողվել է հուզել թեկուզ մեկ մարդու, մաքրել ու ազնվացնել թեկուզ մեկին, ուրեմն, իրավունք ունեմ հանգիստ խղճով ինձ բանաստեղծ համարել...»,- այս օրինաչափ կասկածանքն ու մտատանջությունը, որ ունեցել է Հենրիկ Սահակյան ստեղծագործողը, փարատվում է, երբ հաղորդակցվում ենք նրա ազնվացնող պոեզիային:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ՍԿՍՎՈՒՄ Է «ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ՝ 1+4 ԾՐԱԳՐՈՎ» ԳՐԱՆՑՈՒՄԸ

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ ԱՊՐԻԼԻ 10-Ն Է

ՇԵՐՈԳԶՕՆԻՍԱ ԵՎ ՍԱՄՈՂՋԱԼԱՋՈ ԹԱՆԱՍՏՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԵԼԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

OFFICE OF THE STATE MINISTER OF GEORGIA FOR RECONCILIATION AND CIVIC EQUALITY

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետնախարարի աշխատակազմը Վրաստանում, ՄԱԿ-ի ասոցիացիայի համագործակցությամբ, իրականացնում է «Վրաց լեզվի նախապատրաստական հանրակրթական 1+4 ծրագրով» ստաժավորման պիլոտային ծրագրի գրանցումը: Ստաժավորման պիլոտային ծրագրի նպատակն է բարելավել Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների զբաղվածությունը եւ, վերջին հաշվով, աջակցել նրանց քաղաքացիական ինտեգրման գործընթացում ներգրավմանը:

Ծրագրի շրջանակներում, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հնարավորություն է տրվում մրցույթի հիման վրա ներգրավել ստաժավորման գործընթացին: Հատուկ ստեղծված հանձնաժողովը կապահովի ստաժավորման ընտրության գնահատումը սահմանված չափորոշիչներով: Հաջողության հասած դիմորդները եռամսյա ստաժավորում կանցնեն պետական հաստատություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում եւ հանրային իրավունքի իրավաբանական անձանց մոտ:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետը ապրիլի 10-ն է, ծրագրին կարող է մասնակցել 60 դիմորդ:

Ստաժյորը իրավասու է սահմանված ժամկետներում կատարել ստաժավորման ղեկավարի կողմից տրված հանձնարարությունները, ծանոթանալ համապատասխան հանրային հաստատության յուրահատկությանը, ծառայական փաստաթղթերին, օգտվել համապատասխան տեղեկատվությամբ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգից, ներկա գտնվել եւ մասնակցել հանրային հաստատության կողմից կազմակերպված միջոցառումներին, աշխատանքի ընթացքում բացթողումների եւ թերացումների հայտնաբերման դեպքում, ստաժավորման ղեկավարին առաջարկել դրանց կարգավորման հնարավորությունները:

Ծրագրին մասնակցելու համար պարտադիր է վրացերենի ու մայրենի լեզվի իմացությունը: Որակավորման պահանջների թվում են հավակնորդի կողմից «Վրաց լեզվի նախապատրաստական հանրակրթական մեկամյա ծրագրի անցումը լինի վերոնշյալ 1+4 ծրագրի մասնակից եւ գրանցված լինի բակալավրիատի 3-4-րդ կուրսերում, մագիստրատուրայում, կամ լինի բակալավրիատի-մագիստրատուրայի շրջանավարտ: Գրասենյակային համակարգչային ծրագրերի իմացությունը պարտադիր է:

Ինչ վերաբերում է անձնական ունակություններին, ապա ստաժյորը պետք է ունենա վերլուծական մտածելակերպ, ակտիվ եւ արդյունավետ հաղորդակցության թիմային աշխատանքի ունակություն, կազմակերպվածություն եւ պատասխանատվության զգացում: Ծրագրին մասնակցելու համար, թեկնածուն անցնելու է հարցազրույց: Պարտադիր չէ, որ թեկնածուն լրացնի դիմումի ձեւաչափը եւ այն կցի համապատասխան փաստաթղթերին:

Ներկայացվելիք փաստաթղթերն են՝ շարժառիթային նամակը, 3x4 լուսանկար, անձնական վկայականի կամ անձնագրի պատճենը, տեղեկանք կամ հավաստագիր, որը հաստատում է 1+4 ծրագրի մասնակցությունը, տեղեկանք համալսարանում սովորելու մասին կամ դիպլոմի պատճենը եւ մեկ հանձնարարական:

Կոնտակտային հեռախոսն է՝ Էլիսո Լոմիձե - 596201030:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը մարտի 27-ից սկսել է եւ մինչեւ ապրիլի 8-ը կշարունակի մասնագիտական կրթություն ստանալ ցանկացողների դիմումները:

Ցանկացողները կարող են, պետության լրիվ ֆինանսավորմամբ, յուրացնել ցանկալի մասնագիտությունը զբոսաշրջության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ այլ ուղղությունների ոլորտներում: Անձնական վկայականով գրանցումը կարելի է անցնել Վրաստանի տարածքում գործող հանրակրթական ռեսուրս-կենտրոններում եւ մասնագիտական հանրակրթական ծրագրերն իրականացնող հաստատություններում:

Այս տարի առաջին անգամ դիմորդներին հնարավորություն է տրվել գրանցումն իրականացնել էլեկտրոնային կարգով՝ www.vet.tmis.ge կայք-էջի միջոցով:

Հիշեցնում ենք, որ գրանցումը հնարավոր է մեկ ուղղությամբ գործող մեկից ավելի ծրագրերով:

Գրանցված դիմորդին գրանցումից մի քանի օր անց հանձնվում է քննական տոմսակը, որտեղ մանրամասն ներկայացված է թեստավորման վայրն ու ամսաթիվը: Թեստավորումն անցնելուց հետո, դիմորդներին տրվում է հնարավորություն վերանայելու գրանցման ժամանակ կատարած ընտրությունը եւ մեկ ուղղության ներքո փոխել ծրագրի ցուցակը՝ ելնելով ստացած միավորներից եւ նախորդ տարիների վիճակագրական տվյալներից:

Մասնագիտական թեստավորման ու թեստերի օրինակների հետ կարելի է ծանոթանալ www.naec.ge կայք-էջով:

Հանրակրթական հատուկ կարիքներ ունեցող անձինք գրանցումն անցնում են վերոնշյալ ընթացակարգով, թեպետ նրանք կարող են օգտվել մասնագիտական այլընտրանքային թեստավորումից, ինչը նախատեսում է մուլտիկարգապահական խմբի գնահատման եւ մասնագիտական ստուգման նոր մեթոդ:

Նախորդ տարվա օրինակով այս տարի էլ գարնանային ընդունելությանը ազգային փոքրամասնության ներկայացուցիչ Վրաստանի քաղաքացիները, ովքեր ազգային արգելքի պատճառով չեն կարողանում ստանալ մասնագիտական կրթություն, հնարավորություն ունեն թեստավորումն անցնել հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն: Նրանց համար վրաց լեզվի համապատասխան մակարդակով ուսուցման նպատակով, մասնագիտական ծրագրերում ներդրված է վրաց լեզվի ուսուցման մոդելը:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԼԱՐԻԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Անցյալ տարվա վերջերից սկսած մեր ազգային տարադրամը՝ լարին, բավականին տպտանումներ ապրեց: Հետաքրքիր է՝ ի՞նչ «ճանապարհ» է անցել լարին մինչ օրս:

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Նինոծմինդա

Նախ նշենք, որ լարիին նախորդել էր կուպոնը, որը Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ Վրաստանում հայտնվեց 1993 թվականին: Այդ ժամանակ, դոլարի համեմատությամբ, կուպոնի արժեքը կազմում էր 5690, թեպետ մի քանի ամսում այն հասավ 102300-ի:

1994 թվականին Վրաստանում վավերացվեց հիպերարժեզրկում: Դոլարի համեմատությամբ, կուպոնի արժեքը հասավ 2 միլիոն 400 հազարի, ինչը պայմանավորվեց միլիոն արժողության կուպոնի տպագրումը:

1995 թվականին շրջանառության մեջ դրված ազգային տարադրամը՝ լարին, որի արժեքը սահմանվեց 1 միլիոն կուպոնի չափով, իսկ դոլարի նկատմամբ հարաբերակցությունը կազմում էր 1,3, ինչը պահպանվեց մինչեւ 1998 թվականը: Ռուսաստանում խոր ճգնաժամ սկսվեց, ինչը անմիջականորեն անդրադարձավ լարիի արժեքի վրա, եւ, արդեն հոկտեմբերին դոլարի համեմատությամբ, այն կազմեց 1,4, իսկ տարվա վերջին հասավ 2,10-ի նշագծին: 1999 թվականի փետրվարին լարին սահմանեց իր առաջին պատմական արժեզրկումը: Այն ժամանակ դոլարի համեմատությամբ, լարիի արժեքը կազմեց 2,45: 2000-2005 թվականներին, դոլարի համեմատությամբ, լարիի արժեքը տատանվում էր 1,70-2,20-ի սահմաններում: 2006 թվականից սկսվեց լարիի կուրսի ամրացումը, եւ 2007 թվականի վերջին, դոլարի համեմատությամբ, լարիի արժեքը կազմեց 1,60-1,80: 2008 թվականի օգոստոսին, լարիի համեմատությամբ, դոլարի արժեզրկման պայմաններում տարադրամների հարաբերակցությունը կազմեց 1,39, թեպետ կարճ ժամանակում այն կրկին հասավ 1,70-ի նշագծին: Այդ կուրսը բավականին երկար պահպանվեց: 2016 թվականին սկսվեց լարիի հերթական արժեզրկումը եւ սահմանվեց նոր հակառակորդը, երբ դոլարի համեմատությամբ, արժեքը կազմեց 2,70-2,80: Ներկայումս որոշակիորեն գրանցվել է լարիի ամրացում, ինչը անմիջականորեն անդրադարձավ դոլարի նկատմամբ կուրսի նվազեցմանը: Այն ներկայումս կազմում է 2,44 լարի:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ՇԱՔԱՐԱԽՏԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Ընդհանրապես, շաքարախտի առաջացման կարեւոր գործոններից են մշտական շատակերությունը, սննդում դյուրամարս ածխաջրերի չափից շատ եւ հաճախակի օգտագործումը: Արյան մեջ շաքարի կայուն բարձրացումը ենթաստամոքսային գեղձի ինսուլին արտադրող բջիջների հիմնական գրգռիչն է եւ կարող է հանգեցնել դրանց ֆունկցիոնալ հյուծման:

Մի շարք դեպքերում, շաքարախտը պայմանավորված է ենթաստամոքսային գեղձի բորբոքային, վնասվածքային, անոթային եւ այլ բնույթի ախտահարումներով: Հաճախ հիվանդության առաջացումը կարող են խթանել հոգեհուզական լարվածությունը, սթրեսները: Վարակիչ որոշ հիվանդություններ, ներզատական համակարգի ախտահարումները, ինչպես օրինակ մակերիկամների կեղեւի ուռուցքների առկայությունը, կարող են խթանել շաքարային դիաբետի առաջացումը:

Սովորաբար շաքարային դիաբետի վերաբերյալ կասկածներն սկսվում են հաճախակի ծարավի, ջրից չհագենալու դեպքում: Մասնագետներն ավելացնում են նաեւ մաշկի, հատկապես արմունկների շրջանում չորությունը, բերանից ացետոն հիշեցնող հոտը, գունատությունը, առատ եւ հատկապես սառը քրտնարտադրությունը, անտեղի նյարդային վիճակը:

Այնուամենայնիվ, մասնագետները պնդում են, որ պետք չէ դիաբետ ախտորոշումն ունենալիս խուճապի մատնվել, քանի որ այն կառավարելի է: Փոխարենը պետք է մշտական ուշադրության առանցքում պահել ողջ օրգանիզմի օրգան-համակարգերը, քանի որ անուշադրության դեպքում հիվանդությունը կարող է ախտահարել ողջ օրգանիզմը:

Սիրտ-անոթային համակարգ

Դիաբետի առկայության դեպքում, ախտահարվում է սիրտանոթային համակարգը: Դիաբետը սրտի մի շարք հիվանդությունների խթանման պատճառ կարող է դառնալ: Ժամանակի ընթացքում դիաբետի հետեւանքով սկլերոզի են ենթարկվում անոթները՝ դառնալով այլ օրգան-համակարգերի ախտահարման պատճառ: Սրտամկանի ինֆարկտն ու ինսուլտները բավական հաճախ են հանդիպում դիաբետիկների դեպքում: Ախտահարվում են թե' մեծ, թե' մանր անոթները: Բավական հաճախ են հանդիպում երիկամների ֆունկցիայի խանգարման արդյունքում առաջացած հիվանդությունները: Հաճախ են շաքարային դիաբետ ունեցողներն ունենում հիշողության եւ ուշադրության պակաս:

Հարկ է իմանալ, որ ժամանակի ընթացքում վնասվում է նաեւ մարդու տեսողական համակարգը:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ո՞ր ամսին է ծնվել ձեր կինը

Հունվարի կանայք

Հունվարին ծնված տիկնայք տարբերվում են աներեւակայելի եռանդով եւ հավակնությամբ:

Իրենք շատ լուրջ են վերաբերվում հարաբերություններին ու կյանքին, բավականին պահպանողական են:

Երբեմն այս կանայք չափից ավելի քննադատող են կամ նույնիսկ մանրախնդիր, սակայն դա միայն այն պատճառով է, որ իրենք իսկապես Ձեզ համար ամենալավն են ցանկանում: Միեւնույն ժամանակ պետք է հիշել, որ սեփական զգացմունքների մասին իրենք նախընտրում են լռել:

Հունվարի կանայք իրենց մոտ են թողնում միայն այն մարդկանց, ում սիրում են, եւ որոնք իրենց հետ նույն ինտելեկտուալ մակարդակի վրա են գտնվում: Բացի այդ, եթե ցանկանում եք նրանց հետ մտերմանալ, պետք է նույն աշխարհայացքներն ունենալ:

Փետրվարի կանայք

Փետրվարին ծնված կանայք շատ ռոմանտիկ են, պարզապես իրենց հետ շփվելիս անհրաժեշտ է համբերության որոշակի չափաբաժին:

Ամեն տղամարդ չէ, որ կարող է հասկանալ իրենց խորհրդավոր հոգին: Ոչ բոլորն են հասկանում, թե ինչն է իրենց տրամադրության անընդմեջ փոփոխման պատճառը: Սակայն այդ կանանց հարկավոր չեն «բոլորը»: Իրենց յուրահատուկն է հարկավոր:

Փետրվարյան կանայք օժտված են վառ երեւակայությամբ եւ աբստրակտ մտածելու ունակությամբ:

Դուք պետք է իմանաք, որ եթե դուք նույնիսկ մեկ անգամ ստեք նրանց, ապա այլեւս երբեք չեք տեսնի:

Մարտի կանայք

Մարտի կանայք խարիզմատիկ են եւ հմայիչ: Իրենք հավատարիմ են, եւ այդ պատճառով իրենց կարելի է գաղտնիքներ վստահել:

Այս հավատարիմ ու նվիրված էակները դժվարությամբ են սիրահարվում, իրենց հեշտ է վիրավորել մեկ բառով կամ սխալ կարծիքով: Մյուս կողմից էլ՝ տղամարդուն իրենք ընտրում են մեկ անգամ եւ ամբողջ կյանքի համար:

Ի դեպ, իրենց շատ համապատասխան կլինի մարտին ծնված տղամարդը:

Ապրիլի կանայք

Այս կանայք բնությունից դիվանագետներ են: Իրենք հեշտությամբ լեզու են գտնում ցանկացած մարդու հետ: Իրենց միակ թերությունը կարելի է համարել այն, որ ժամանակ առ ժամանակ սովորություն ունեն իրենք իրենց խղճալու:

Սակայն, պետք է հիշեք, որ ապրիլյան կանայք շատ խանդոտ են, իսկ այդ թեմայով ցանկացած վեճը պարզապես էմոցիոնալ պայթյուն է: Այնպես որ, պետք չէ առիթ տալ: Իսկ եթե վեճն այնուամենայնիվ սկսվել է, փորձեք չշարունակել այն, այլ մեղմացնել: Կամ պարզապես հեռացեք սենյակից:

Մյուս կողմից, ապրիլյան կինը բոլորից լավ գիտի, թե ինչ է հաճույքը: Նա իսկապես կդարձնի ձեզ աշխարհի ամենաերջանիկ տղամարդը:

Այս կանայք, սակայն, սիրտը բացում են միայն նրանց առաջ, ով արժանի է իրենց վստահությանը, եւ ով կանի ամեն բան, որպեսզի չկորցնի այն:

Մայիսի կանայք

Մայիսն այն ամիսն է, երբ ծնվում են համառ եւ իրենց սկզբունքներին հավատարիմ կանայք: Իրենց ներքին ուժեղ եւ բարոյական կողմնացույցը երբեք չի ենթարկվում խախտումների:

Արտաքնապես այդ կանայք սովորաբար շատ գրավիչ են, ինչը, սակայն, համահունչ է իրենց բավականին բարդ բնավորության հետ:

Այսպիսի կանայք վտանգավոր են ցանկացած տղամարդու համար, ով կսիրահարվի նրանց: Որովհետեւ, եթե այդ կինը փոխադարձ ոչինչ չի զգում, ապա դա կվերածվի ողբերգական, գուցեեւ ճակատագրական սիրո:

Եթե դուք երբեւէ սիրավեպ ունենաք մայիսին ծնված կնոջ հետ, ապա կարող եք վստահ լինել՝ դուք նրան կհիշեք ողջ կյանքի ընթացքում:

(Շարունակելի)

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Իմ հոգին կրեց բոլոր այն վերքերը, խոցերը, ջարդերը, մահերը, որը կրեց հայ ժողովուրդը: Այն բոլոր հրացանները իմ հոգու մեջ պայթեցին, այն բոլոր սրերը իմ հոգին մորթեցին:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875-1957)
Հայ մեծ բանաստեղծ

Ով դժբախտության մեջ լքի ընկերոջը, ինքը կճաշակի դժբախտության դառնությունը:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Այն մարդուն, որը զրպարտանքներ է շշնջում ուրիշների ականջին, վռնդիր տնից:

ԹԱԼԵՍ
(մ.թ.ա. 640-548)
Հին հույն փիլիսոփա

Երբեք մի մատուցեք այնպիսի ծառայություններ, որոնց մասին չեն խնդրում:

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ
(1799-1850)
Ֆրանսիացի գրող

Ուրիշի գաղտնիքը հայտնելը դավաճանություն է, իրենը հայտնելը՝ հիմարություն:

ՎՈԼՏԵՐ
(1694-1778)
Ֆրանսիացի գրող, փիլիսոփա



Պետության մեջ ծույլ ու դատարկ մարդիկ նման են փեթակի բոռերին, որոնք խժռում են աշխատող մեղուների մեղրը:

ՍԵՐՎԱՆՏԵՍ
(1547-1616)
Իսպանացի գրող

Սարսափելի ժամանակներ ենք ապրում. գիտեինք, որ պատերն ականջներ ունեն, բայց որ նաեւ աչքեր ունեն՝ նոր ենք իմանում:

ՌԱՖԱՅԵԼ ՏԵՐ-ՍԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ - Ճի՞շտ է, որ ձեր աղջկան ամուսնացնում եք:

- Այո, մի շաբաթից:

- Իսկ փեսացուն գիտի՞, որ նրա մի աչքը ապակուց է:

- Ուզում ենք անակնկալ անել...

☺ Մի հավաքում մեկը հարցնում է կողքի տղամարդուն.

- Չգիտե՞ք՝ ով է այն սարսափելի այլանդակ կինը:

- Դա իմ կինն է:

- Օ, կներեք, ես հիմարություն արեցի:

- Չէ', չէ', այդ ես եմ ժամանակին հիմարություն արել:

☺ - Դուք կարո՞ղ եք ընտանիք պահել,- հարցնում է հայրը իր աղջկա ձեռքը խնդրող երիտասարդին:

- Դե', իհարկե:

- Ես շատ ուրախ եմ: Բայց նկատի ունեցեք՝ մենք 8 հոգի ենք:

☺ Հանդիպում են երկու ընկերներ:

- Ողջույն: Ինչու՞ ես այդքան տխուր:

- Ես որդի եմ ունեցել:

- Բայց դա շատ լավ է, դու պիտի ուրախանաս, ոչ թե տխրես:

- Ես այդպես էլ անում էի, քանի դեռ կինս այդ մասին չէր իմացել:

☺ Փողոցում հանդիպում են երկու ընկերուհի.

- Քեզ դու՞ր է գալիս իմ նոր շրջազգեստը:

- Ներիր, բայց ես վիճաբանելու ժամանակ չունեմ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընթացիկ տարվա ապրիլի 2-ին Հայաստանում կանցկացվեն վեցերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները:

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվությամբ, խորհրդարանական ընտրություններին մասնակցության համար գրանցում են անցել կուսակցությունների չորս ընտրադաշինք եւ առանձին հինգ կուսակցություն:

Ըստ քվեաթերթիկում շնորհված համարների, ընտրություններին կմասնակցեն «Ելք» կուսակցությունների դաշինքը, «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը, «Հայկական վերածնունդ» կուսակցությունը, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքը, «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքը, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, «Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքը, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը:

Ընտրությունների համար ԿԸՀ-ի կողմից ընտրական ձայնի իրավունքով գրանցվել է 2 564 334 ընտրող, նրանք ընտրելու են Ազգային ժողովի 131 պատգամավորի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԺ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մարտի 29-ին, աշխատանքային այցով, մեկնեց Մալթայի Հանրապետություն՝ Եվրոպական միության եւ Արեւելյան գործընկերության անդամ երկրներից ԵԺԿ-ին անդամակցող կուսակցությունները ներկայացնող պետությունների եւ կառավարությունների ղեկավարների հետ միասին մասնակցելու Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) համագումարի նիստերին ու գագաթաժողովին:

Համագումարի երկու օրերին պատվիրակների ուշադրության կենտրոնում էին համաեվրոպական նշանակության հարցերը, օրակարգում մեծ տեղ վերապահվեց «Եվրոպայի ապագան» առանցքային թեմայով քաղաքական քննարկումներին: Անդրադարձ կատարեցին նաեւ Եվրոպական հարեւանության խնդիրներին, Արեւելյան գործընկերության ոլորտում առկա զարգացումներին, միջազգային արդի մարտահրավերներին:

Սերժ Սարգսյանը համագումարի լիագումար առաջին նիստում հանդես եկավ ելույթով, որում անդրադարձել է Հայաստան-Եվրամիություն հարաբերություններին եւ համագործակցությանը, երկկողմ գործընկերության ընդլայնման ու խորացման նոր հնարավորություններին եւ հեռանկարին, սահմանադրական բարեփոխումներից հետո Հայաստանի ժողովրդավարացման ճանապարհին կարեւորագույն հանգրվան հանդիսացող՝ օրերս կայանալիք խորհրդարանական ընտրություններին, եվրոպական մեծ ընտանիքի առաքելությանն ու խնդիրներին:

ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԱՋՔԻ ԸՆԿԱԾ ՉԻՆՎՈՐԱՅՈՂՆԵՐԻՆ

Մարտի 25-ին աշխատանքային այցով Արցախի Հանրապետությունում գտնվող Հայաստանի նախագահ, Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը, հայկական երկու հանրապետությունների փոխգործակցության շրջանակում, Արցախի նախագահ Բակո Սահակյանի, Հայաստանի եւ Արցախի պաշտպանության նախարարների ու բարձրաստիճան զինվորականների ուղեկցությամբ, եղավ ՊԲ զորամասերից մեկում, ծանոթացավ զինված ուժերի մարտական պատրաստականությանը եւ ունկնդրեց զորամասի շարահրապարակում զինծառայողների համար կազմակերպված համերգը:

Համերգային ծրագրի ավարտին, նախագահ Սարգսյանը Հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած արիության եւ խիզախության համար պետական բարձր պարգեւներով՝ Մարտական ծառայության մեդալով, պարգեւատրեց մարտական հերթապահության ընթացքում աչքի ընկած մի շարք զինծառայողների, նվերներ հանձնեց նրանց եւ զինծառայողների այն ծնողներին, որոնց ընտանիքներում երկու կամ ավելի զինծառայողներ մեծ նվիրումով իրենց պարտքն են կատարում հայոց բանակում:

ԿԲԱՐՁՐԱՑՎԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի կառավարությունը հստակ քայլեր կձեռնարկի սահմանափակ ռեսուրսներով ավելի շատ շահառուների զբաղվածության ապահովման, ինչպես նաեւ զբաղվածության պետական ծրագրերի իրականացման բիզնես գործընթացները պարզեցնելու համար: Այդ նպատակով, Հայաստանի կառավարությունը լրացումներ եւ փոփոխություններ կատարեց նախկինում ընդունած որոշումներից մեկում զբաղվածության պետական ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Արդյունքում ակնկալվում է զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգի եւ գնահատման, ինչպես նաեւ իրավակիրառական պրակտիկայի արդյունքներով վեր հանված խնդիրների իրավական լուծումների ապահովում, ծրագրերի իրականացման մեխանիզմների հստակեցում, շահառուների առաջնահերթությունների պարզեցում, զբաղվածության պետական քաղաքականության իրականացման գործընթացում գործատուների մասնակցության շրջանակների ընդլայնում, ոչ նպատակային օգտագործված գումարների հետ վերադարձման մեխանիզմների ամբողջականացում: Նախատեսվող գործառույթների պատվիրակումը մասնագիտացված կազմակերպությանն առավելագույնը կմեծացնի ծրագրի իրականացման արդյունավետությունը՝ գործառույթների ամբողջական եւ լիարժեք իրականացման տեսանկյունից: Առաջարկվող փոփոխությամբ հստակ կտարանջատվեն ծրագրի իրականացման կազմակերպական եւ մասնագիտական գործառույթները: Որոշմամբ հնարավորություն է տրվում անմրցունակ անձանց ընդգրկվել զբաղվածության պետական ծրագրերում մեկից ավելի անգամ՝ տվյալ ծրագրի ավարտից առնվազն երեք տարի հետո:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵԼ Է 6,2 ՏՈԿՈՍՈՎ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը, 2017 թվականի հունվար-փետրվարին, 6,2 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում է գրանցվել միայն շինարարության ոլորտում եւ սպառողական գների ինդեքսում:

Շինարարության ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 13,8 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում 2017 թվականի հունվար-փետրվարին ցուցանիշը 10,4 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: 2016թ. հունվար-փետրվարի համեմատ, ընթացիկ տարում ծառայությունների ծավալն (առանց առեւտրի) աճել է 11,1 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 0,1 տոկոսով:

Սպառողական գների ինդեքսը 2017 թվականի հունվար-փետրվարին նվազել է 0,4 տոկոսով, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսն ավելացել է 4,9 տոկոսով:

Առեւտրի շրջանառությունն ավելացել է 9,6 տոկոսով: Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 16,1 տոկոսով ավելացել է 2016 թ. հունվար-փետրվարի համեմատ: Միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 1,1 տոկոսով (181 հազար 440 դրամ): Արտաքին ապրանքաշրջանառության ծավալները, 2016 թ. հունվար-փետրվարի համեմատ, աճել են 22,2 տոկոսով (761 մլն ԱՄՆ դոլար), ընդ որում՝ արտահանումն աճել է 20,1 տոկոսով (273,7 մլն դոլար), իսկ ներմուծումը՝ 23,5 տոկոսով (487,3 մլն դոլար):

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

Մարտի 27-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ռիչարդ Հոգլանդի (ԱՄՆ), Ստեֆան Վիսկոնտիի (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անչնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր, անդրադարձել արցախա-ադրբեջանական հակամարտության շփման գծում տիրող իրավիճակին:

Համանախագահները Հայաստանի նախագահին տեղեկացրել են Բաքվում ունեցած հանդիպումների մասին:

Հանդիպման մասնակիցները կարեւորել են բանակցային գործընթացում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված հանչնառություններին կողմերի հավատարմությունը, ինչպես նաեւ Վիեննայում եւ Սանկտ Պետերբուրգում բարձր մակարդակով չեռք բերված պայմանավորվածությունների կատարման անհրաժեշտությունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՇԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մարտի 30-ին, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, տեղի է ունեցել Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով, որի ընթացքում մասնավորապես քննության են առնվել Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունում Պատրիարքական տեղապահի ընտրությունների առնչությամբ տեղ գտած վերջին զարգացումները:

Ամենայն Հայոց կաթողիկոսը, անդրադարձ կատարելով ստեղծված իրավիճակին, ժողովականներին տեղեկացրել է նաեւ Պատրիարքության եկեղեցական համագումար ժողովի ատենապետ Տեր Եղիշե վարդապետ Ուչքունյանի եւ ատենադպիր Տեր Տրդատ քահանա Ուզունյանի կողմից մարտի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին առաքված գրության մասին, որով Ամենայն Հայոց Հայրապետին պաշտոնապես տեղեկացվել է մարտի 15-ին Պատրիարքարանում տեղի ունեցած ժողովի արդյունքում Գերաշնորհ Տեր Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի՝ Պատրիարքական տեղապահի պաշտոնում ընտրվելու մասին: Քննարկումների ավարտին, Նորին Սրբությունը ծանուցել է Պատրիարքական տեղապահի ընտրությունն օրինելու վերաբերյալ կայացված որոշման մասին, ինչը ողջունվել է Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների կողմից: Նույն օրը Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը նամակ է հղել Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության եկեղեցական համագումար ժողովի դիվանին:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(31 մարտի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	482,20	485,00
ԵՎՐՈ	512,00	519,00
ՌՈՒԲԼԻ	8,50	8,72

Մարտի 24-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 0,30 դրամով:

ԱՌԱՋՆԱԽԱՂ

ՍՊԱՍՎԱԾ ՈՒ ԱՆՍՊԱՍԵԼԻ «ԳԻՔՈՐԸ»

Մարտի 29-ին, Թբիլիսիի Ալ.Գրիբոյեդովի անվան Պետական ռուսական դրամատիկական թատրոնի Փոքր դահլիճում, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի թատերախումբը հանդես եկավ Հովի. Թումանյանի «Գիքորը» պիեսի նոր պրեմիերայով: Բեմադրության հեղինակը թատրոնի ռեժիսոր Լեւոն Ուզունյանն է:

Հիշեցնենք, որ Ուզունյանի «Գիքորի» նախնական տարբերակը 2012թ. թատերական ստուդիայի շրջանավարտների դիպլոմային աշխատանքն էր: Այսօր՝ հինգ տարի անց, հանդիսատեսը նորից հանդիպեց ներկայացված «Գիքորին»:

Բեմադրական ուրույն դիմագծով ճանաչում գտած ռեժիսորը այստեղ հանդես եկավ «Գիքորի» նորովի ու աննախադեպ լուծումով: Պիեսի ծանոթ սյուժեում մենք տեսանք ե'ւ Թումանյանական, ե'ւ Ուզունյանական Գիքորին, եւ վերջինս, իր կերպարային հանգուցալուծմամբ, ոչ այլ ինչ էր, քան առաջինի հոգեբանական շարունակություն: Ըստ այդ լուծման, Գիքորը կենդանի է, նա մեր հոգում մշտապես ապրում է՝ իբրեւ անպարտելի բարության խորհրդանիշ...

Ծիծաղ ու արցունք, տխրություն ու ոգեւորություն, այսպես ու այս զգացումներով արձագանքվեց Վարդուհի էլբակյանի (Գիքոր), Սամվել էլբակյանի (Համբո), Անահիտ Հարությունյանի (Նանի), Արթուր Գասպարյանի (Բազազ Արտեմ), Մարիամ Խաչոյանի (Նատո), Քրիստինե Թումասյանի (Դեդի), Արթուր Գրիգորյանի (Կինտո), Արեն Մկրտչյանի (Բաղո), Մարինե Մարտիրոսյանի (Մաշենկա), Իրինա Ռտիշեւայի (Էփեմիա), Հենրիխ Պետրոսյանի (Ալեքսանդր), Արամ Միքայելյանի (Վասո) համոզիչ կերպարանավորումները, որոնք ռեժիսոր-դերասան համատեղ ու նպատակամետ տքնանքի ցանկալի ու հաղթական պտուղներն էին: Շնորհավորում ենք երիտասարդ դերասանների հաղթանակը: Ողջունելով ներկայացման գլխավոր հերոսի՝ Գիքորի դերակատար, ստուդիայի 2-րդ կուրսի ուսանողուհի Վարդուհի էլբակյանի անդրանիկ բեմելը, ցանկանք նրան՝ սույն պատասխանատու դերակատարումով սկսված բեմական ճանապարհն անցնի նույնքան արժանապատիվ տքնանքով:

Մի քանի խոսք՝ պրեմիերայի հանդիսատեսի մասին: Ուրախալի էր, որ «Գիքորի» «դատը» հանձնվել էր նաեւ պատանի հանդիսատեսին: «Գիքորի» մարտի 29-30-ի ներկայացումները դիտեցին Բոլնիսիի շրջանի Բոլնիս-Խաչեն, Մառնեուլիի շրջանի Դամիա, Կարմիր գյուղ, Միրզոեւկա, Խոժոռնի գյուղերի կրթօջախներ, ինչպես նաեւ Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցի, «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի նախակրթարանի սաները:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ
Լուսանկարը՝
ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆՑԻ

ՀԻՇԱՏԱԿ

ՄԱՀԱՃԵԼ Է ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ

ՆԱ ԾՆՎԵԼ ՈՒ ՄԵԾԱՑԵԼ ԷՐ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՇՐՋԱՆԻ ԱՂՔՅՈՐՓԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Կյանքից հեռացավ վաստակաշատ պատմաբան, հայագիտության բնագավառի ճանաչված կազմակերպիչ, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը:

Վլադիմիր Բարխուդարյանը ծնվել է 1927թ., Վրաստանի Մառնեուլիի շրջանի Աղքյորփի հայաբնակ գյուղում: Սովորել եւ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1945-1950թթ.՝ Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, ապա՝ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան:

Վլադիմիր Բարխուդարյանն աշխատանքային մկրտությունն ստացել է Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա աշխատել է Հայաստանի Պատմության ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, գիտքարտուղար՝ հասնելով մինչեւ ակադեմիկոս-քարտուղարի ու ԳԱԱ նախագահի օգնականի աստիճանի:

Նրա գլխավոր զբաղմունքը հայկական գաղթավայրերի, պատմագիտության եւ հայ-ռուսական ու հայ-վրացական հարաբերությունների հիմնահարցերի մշակումն էր:

Ակադեմիկոսը ավելի քան չորս տասնամյակ ծավալել է գիտական-կազմակերպական ակտիվ գործունեություն: Նա արժանացել է բազմաթիվ պարգեւների՝ ԽՍՀՄ Պատվո շքանշան, Սուրբ Մեսրոպ Մաշտոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ շքանշաններ, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե մեդալ:

Նա հաճախ էր այցելում հայրենի Աղքյորփի, հետաքրքրվում գյուղի հիմնախնդիրներով:

Մառնեուլիի շրջանի Աղքյորփիի գյուղական համայնքը, դպրոցի ուսուցչական կոլեկտիվը իր խորին վիշտն ու ցավակցությունն են բերում Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, ծնունդով Աղքյորփի գյուղից, տեղի հանրային դպրոցի առաջին շրջանավարտ, խոշոր գիտնական, հայրենիքի պատմության նվիրյալ

Վլադիմիր Բախշիի ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ

ընտանիքին, հարազատներին ու մերձավորներին:

«Վրաստան» թերթի աշխատակազմը վշտակցում է գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս

Վլադիմիր Բախշիի ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի ընտանիքին, հարազատներին ու մերձավորներին:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Բերդ-ամրոց Վրաստանի Ախալցիխե քաղաքում: 5.«Երբ կրակում են ...ները, մուսաները լռում են»: 9.Ջրահապատ երկկենցաղ կենդանի: 10.Արական անուն: 12.Շատ վատ, շատ դժվար վիճակում: 13.Շատակեր առասպելական հերոս: 15.Հարավային Կորեայի մարաքաղաքը: 16.Քանդված, ավերված: 17.Ֆրանսիական հայտնի ֆիլմ «..., ... տյուլպան»: 19.Ավ.Իսահակյանի գրող, գրականագետ թոռը՝ ... Իսահակյան: 22.Մակերեսի չափման միավոր: 23.Անձնական դերանուն: 25.Հարավամերիկյան ե'ւ ծառ, ե'ւ պտուղ: 27.Խ.Աբովյանի «Վերքի» հերոսը ժողովրդի մոտ՝ «... բալասի»: 30.Հայոց Արշակունի թագավոր: 31.Ֆրանսիական քաղաք: 33.Հասարակական-քաղաքական կին գործիչ ... Հարությունյան: 34.Բջջային հեռախոսային կապի օպերատոր Վրաստանում: 35.Անշունչ առարկա: 36.Խորհրդային ֆիզիկոս Յուրի ...: 37.Համադասական շաղկապ: 39.Լրագիր, նաեւ տետրի կամ գրքի թուղթը: 41.Կճուճի, սափորի հումք: 43.Քաղաք Եմենում: 45.Հայ բանաստեղծ, «Կարոտ» երգի բառերի հեղինակ ... Վշտունի: 47.Լիճ Արեւմտյան Հայաստանում: 50.Ասորեստանի մայրաքաղաքը: 51.Կուսակրոն քահանա: 52.Անվանի դերասան ... Ներսիսյան: 53.Ձկնորսի գործիք: 54.Վրաստանում ապրող ազգային փոքրամասնություն: 55.Երկարության չափման փոքր միավոր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Օպերային հանրահայտ երգիչ, տենոր, Սարոյի դերակատարը «Անուշ» օպերայում՝ ... Պետրոսյան: 3.Արմեն Տիգրանյանի հայտնի օպերան: 4.Իսրայելում բնակվող ազգ: 5.Վրաստանի Այազմա գյուղում ծնված հայ գուսան: 6.Հայդուկապետ Շահան ...: 7.Լեռնային գետ Ռուսաստանում: 8.Բուլղարուհի պայծառատես: 11.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված մեծ վիպասանը: 14.Գրավատանը պահ տված իր: 18.Պայթուցիկ նյութ: 20.Հերոսուհի կինոռեժիսոր Ներսես Հովհաննիսյանի «Հարսնացուն հյուսիսից» ֆիլմում: 21.Վառ, մուգ գույն: 22.Խոտան, որակից զուրկ: 23.Հայ գրող Նար-Դոսի որդին, օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 24.Բայի ժամանակ: 25.Եկեղեցու վերնամասը: 26.Ուրիշ, այլ տեղ: 28.Լռկվել, պապանձվել: 29.Եթովպիայի քաղաքամայրը՝ ... Աբեբա: 30.Ծեր, զառամ: 32.Հովհ.Թումանյանի հեքիաթներից՝ «... Հուռին»: 38.Գյուղ Վրաստանի Ախալքալաքիի շրջանում: 40.Հերոսուհի Շ. Ռուսթավելու «Ընձենավորում»՝ ...թին: 42.Ռաֆֆու պատմավեպերից՝ «... Բեկ»: 43.Կատաղի, մոլեգին: 44.Ինքնավար քաղաք-մարզ Անդրկովկասում: 45.Անաղ, ոչ աղի: 46.Ժխտական նախածանց: 48.Թունավոր օձ: 49.Բագրատունի թագավոր: 53.Երկարության չափ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Ֆրեդի: 8.Ալյուր: 10.Անգդ: 11.Իսա: 13.Ագաթա: 14.Ցեմենտ: 16.Արփա: 17.Ցած: 19.Քաբուլ: 21.Փիսո: 22.Յան: 23.Նասա: 27.Կողբ: 29.Խմիչք: 32.Ասա: 33.Սակ: 35.Ոսկե: 36.Ծղարո: 37.Ալոջ: 39.Բեմ: 42.Շքեղ: 44.Տոստան: 46.Սվազ: 49.Քուղ: 50.Կիրճ: 53.Ահոտ: 54.Լադ: 55.Մոր: 56.Անոր: 57.Ալտ: 58.Պապա: 59.Գոթ: 60.Աութ: 61.Լագ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ուրուգվայ: 2.Ձինա: 3.Քաղցր: 4.Դյումա: 5.Պրինցիպ: 7.Դաթսուն: 9.Ռա: 12.Ստաս: 15.Եփեսոս: 18.Ծոռ: 20.Բազիս: 24.Ականջ: 25.Աղածո: 26.Թքել: 28.Քար: 30.Մոնե: 31.Չկա: 33.Սարք: 34.Կոճղ: 38.Ոլոք: 40.Մտահոգ: 41.Պտղատու: 42.Շոկ: 43.Եվրոպա: 45.Սուլլա: 47.Վան: 48.Ձորո: 51.Իմալ: 52.Ճրագ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445